## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Մոսկվա

Այսօր խոր վշտով լսեցինք մահվան գուժը մարշալ Հովհաննես Բաղրամյանի, հարազատ զավակը հայ ժողովրդի և հերոս զինվորականը սովետական բանակի, որ հատկապես Հայրենական պատերազմի ծանր տարիներին իր կարևոր նպաստը բերեց սովետական ռազմական ուժերի պատմական մեծ հաղթանակին և հայրենիքի փրկության:

Մարշալ Բաղրամյանի ողջ կյանքը նվիրված եղավ սովետական հայրենիքի ապատության և փառքին: Հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի հպարտ է մարշալ Բաղրամյանով: Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից օրհնություն Հովհաննես Բաղրամյանի հերոսական կյանքին ու հայրենանվեր վաստակին: Հաճեցեք Մեր ցավակցությունները ներկայացնել մարշալի սգակիր հարազատներին:

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
23 սեպտեմբեր 1982 թ.